

11432

891.99
Y-64

17.220

136

241

241

11

891.99

4-64

Մ. ԿՈԼՄԱՆԵԱՆ

ՊԱՏԻՔ

1007
31862

ԴՐԱՄ 4 ԳՈՐԾՈՂ. 6 ՊԱՏԿԵՐՈՎ.



ՓԻՖԻ

Տպարշ Մ. Պօզնիսաւեա Եկ. ըն.

1883

2726

ГИДР

Дозволено цензурою, Тифлисъ, 1883 г. 15 сентября



Գ Ա Տ Ւ Ի

2003

Պ Ա Տ Ի Ւ

Դրամա 4 դործող. 6 պատկերով:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍԻՄՈՆ ՉԱՅԵԱՆՑ՝ 50 տարեկան՝ ասիական հագուստով.
չուխայ թեաւոր, գոտի, լայն վարդիկ,
տան մէջ գուլպացով, գուրսը քոշե-
րով) բուխարայ գտակ:

ՍԱՄՍՈՆ՝ սորա որդին (բլուզայով).

ՍՍՀԱԿԵԱՆՑ՝ Զայեանցի փեսան (եւրոպակ. հագուստ :

ԱՌԱՋԻՆ
ԵՐԿՐՈՐԴ (ՊԵՏՐՈՎ).
ԵՐՐՈՐԴ
ՊՕԼՈՍ

{ Զայեանցի համաքա-
զաքացիներ նոյն հա-
գուստը, գլուխներին,
առաջնը բուխարայ
գտակ. իսկ միւսներինը
շատկա:

ԽԱՌԱՌ՝ Զայեանցի աղջիկը, (վրաց հագուստով: Առաջ գլու-
խը բաց է, յետոյ կապած):

(Հագուստը պէտք է լի-
ՄԱՐԻԱՄ՝ Զայեանցի կինը
ՇՈՂԱԿԱԹ՝ Սահակեանցի մայրը. { նի հայաստանցւոյ, հա-
գուստի ձեւը Շուշեցւոյ
հագուստը. զօր բայց
կարելի է և վրաց ձեռ-
եղի ՍԱԲԷԹ՝ Զայեանցի քոյրը. { կը հագնուեն բոլոր
երեքն էլ):

Ծառաներ (արխալուխով)
Փողովուրդ
Երկու ուսուցիչ
Անցքը պատահում է մի գաւառական քաղաքում:

{ Սենեակները սարքուած
են ասիական փարշով և
եւրոպական մէօրլով:



ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂ ՈՒԹԻՒՆ

I

Բէմը՝ Զայեանցի տունն է. Ակմօն Զայեանցի մօտ
նստած է Սամօնը:

ԶԱՅԵԱՆՑ

Դու զիտես, Սամօն, առանց իմ ասելու,
որ ինչքան եմ չարչարուել քեզ ուսում տալու
համար, երեք, երեք եմ վարձել ուսուցիչներ, աշ-
խարհքի փող մախել այնոնք հասցրել, որ այժմ
ուղարկում եմ քեզ զիմնազիա... Քեզ չեմ ասել
այն թէ ինչ է պատճառը, որ այսքան աշխատում
եմ քեզ զիմնազիա ուղարկել... այժմ կ'ասեմ:
որ զու պէտք է չինօֆնիկ զառնաս, ինչպէս Գրի-
գորեանց Տիգրանը կամ շատ ուրիշները: Բայց
բանն այն է, որդի, որ ես ուզում եմ, որ դու
առաջինը լինես չինօֆնիկ եղողը մեր Զայեանց
յեղի մէջ: Այդ պատճառաւ....

ՍԱՄՍՈՆ

Բայց, ահա մեր հօրեղբօր որդին, և ունը,
խճանից վաղ է գնացել զիմնազիս, նա, որ չինով
նիկ դառնայ... ես էլ ի՞նչպէս առաջինը կը լինեմ:

ԶԱՅԵԱՆՑ

Ահա, տեսնումես, դու պէտք է օր ու գիշեր անես, քունդ կտրես, աշխատես, նրան առաջը տաս, որ դու նրանից վաղ վերջացնես զիմնազիսն:

ՍԱՄՍՈՆ

Ի՞նչպէս անեմ, ի՞նչպէս կարող եմ նրանից վաղ, մենք մի դասատան չենք լինելու: Ո՞ւր է, որ նա, Աստուած անէ մնայ մի քանի դասատան մեջ, այն ժամանակը..

ԶԱՅԵԱՆՑ

Աստուած ողօրմած է, որդի, եթէ Աստուած ուզեց, կարող է նրան... Այո, այն եմ ասում, Սամ-

սօն) լաւ իմացիր, որ քեզանից է կախուած մեր թշնամոյ սրտով լինելը կամ չ'լինելը: Դու գիտես, որ մեր ամենամօտիկ բարեկամները — մեր ամենաշատ թշնամիներն են: Իմ քոյրը քո հօրաքոյրը, քո աչքովդ տեսար երեկո ինչպէս տիրեց, որ ասացինք թէ վաղը քեզ ուղարկում ենք. ինչո՞ւցն է տիրում: որովհետեւ մեր ամենամօտիկ բարեկամը, իմ քոյրը դարձեալ մեր լաւը չէ ուզում: Նախանձում է մեզ, մեր առաջին էլ է մինչեւ անգամ արտայայտում իրան նախանձը: Ուրեմն լաւ իմացիր, որ մեր բարեկամները — մեր առաջի չարակամներն են և նրանք ամենից շատ են ցանկանում: որ մենք տարաբազուենք, թշուառանանք մեր օսրերը սեանան: Բայց... Այո, հազար անգամ եմ ասել, այժմ էլ եմ ասում, շատ բաներից քեզ հեռու պահպէիր:

ՍԱՄՍՈՆ

Ես չ'մ գիտում:

ԶԱՅԵԱՆՑ

Մի բան, որ քեզանից հարկ է պահանջում: մի բան, որ քեզ, այսինքն քո ուսման գործին, որ և իցէ կողմով կարող է վնասակար լինել — աչքով

չպէտք է տեսնես, հեռու պահես քեզ հեռու,
միշտ հեռու, ամեն բանից, ինչ ուզում է լինի:
Ընկեր ասած բանը չպէտք է ունենաս; Կ'լինի կր
գան այս կ'ասին, այն կ'ասին... բայց ականջներդ
խփիր...

ԱԱՄՍ0Ն

Ես զիտեմ, թէ ում հետ ընկերութիւն կ'ա-
նեմ, քաղաքից գնացած աղայոց հետ:

ԱԱՀԵԱՆՑ

Ինչ՝ վայ, վայ, տունս կ'քանդես. Աստուած
ոչ անէ, նրանց հետը բարեկամացիր նրանց հետ
դարձ ունեցիր, քեզ կ'խարեն, գլխից կ'հանեն,
ուզու տեղը՝ կ'ծուեն: Գու միթէ չես գիտումիոր
ամբողջ քաղաքը մեր չարն է ուզում, որ իրանց
որդիքներին կ'սովորեցնեն պատահած տեղը իմ
որդուս, քո, կամ միւտին խելքից հանեն, վնաս
տան: Այդ գու չես գիտում, մեր քաղաքի մարդ-
կանց սովորութիւնն է, իրար առւն աշխատել քան-
դել, այժմ մեր ըրս կողմի մարդիկը ուզում են
չարչարում են, ձեռքից եկածը անում են, որ մի
կ'երպով ինձ վնասն, որովհետև նոխանձում են
ինձ: Յետոյ շատ բան կ'իմանաս: Այն եմ ասում:

Հեռու կաց նրանցից. մինչեւ այն տեղը, որ նրանց
հայրերը կ'զրին, որ կարողացածին չափ վնասեն:
Հեռու կենաս, ասումեմ քեզ, որդիս:

ՍԱՄՍ0Ն

Լ ասումեմ:

ԶԱՅԵԱՆՑ

Յուսով եմ; որ գու էլ նրանց նման քո հօրը
միայն կ'ձանաչես և ուրիշ ոչոքի, այս Աստուածու
աշխարհի երեսին քեզ միայն մի մարդ է սիրում,
այդ ես եմ... քո հայրդ: (Լոռութիւն): Այս քեզ
աւելորդ է և այն ասելը այսոեղ սովորելիս էլ
եմ ասել, միշտ եմ կրկնել, վարժապետիդ, մե-
ծերիդ մօտ համեստ պէտք է լինես... եթէ ոչ,
որդիս, մի չնչին բանի համար իմ օրս կ'սեացնես,
վայ, ասումեմ վայ այն ժամին, երբ քո մասին
մի վատ բան լսեմ, կամ անհնապանդութիւն կամ
ով գիտէ ինչ... վայը եկել—ինձ տարել է այն
ժամին:

Վ երջապէս, որդի, այնպէս պէտք է անես,
որ թշնամու սիրոը չուրախանայ, քո հայրդ սեե-
րես չմնայ աշխարհիս երեսին:

ՄԱՐԻԱՄ. (մանելով, ցածր)

Աւետարանի ծայրը սկսել է: Այ մարդ
այսպէս բան տեսել ես, այսօր գնումէ երեւ
խան, ոչ մի բարեկամի իմաց չենք արել: Իմ
քրօջը գոնէ կ'ասէինք:

ԶԱՅԵԱՆՑ

Ու, այդ իմ գործն է: Չէ հարկաւոր, վեջաւ
շաւ գնաց: Նրանց աչքն է պակաս մեզ, որ դան
ձանապարհի վերայ երեխայիս աչքով տան, այդ
չարակամների մեծերը: Ես ասել եմ: մինչեւ իմ
տանս մէկ առյայտ ուրախութիւն չ'լինի, իմ տունը
մարդ չ'պէտք է ոտը կոխի: Այն ժամանակը թող
գան արաքուին: Որ հարցրին, բան է, խոսացին...
ասա յանկարծ պատահեցաւ, չ'կարողացանք իմաց
անել: Ոչոք չ'գիտէ, վերջացաւ, գնաց:

ՄԱՐԻԱՄ

Ոչոք չ'գիտէ, ճշմարիս է, այդպէս կարող ենք
ասել:

ԶԱՅԵԱՆՑ

Մէկ էլ քո հօր եղօր աղջեկը՝ Մական է
պակաս, որ գայ իրան շան աչքովը բայցուշ
կոկոալով... Ո՛չ ես նրան ձակատին վաղեմ:

ՄԱՐԻԱՄ

Ովէ նրա համար ասում: Կուրանայ նա զոյզ
աչքերով, որ մեր տան ձանապարհը չ'գտնէ: Մեւ
զայ Ասուուծոյ, վաս ժամանակ ենք խօսում, երեւ
խային ձանապարհ զցելիս նստել ենք հայհոյում:
(Լսում է փողերի ձայն):

ԶԱՅԵԱՆՑ

Այն եկողը ովէ է, տես: Իմ կարծիքով ուշ
շացաւ ծառան: Այդ Բաղդասարն էլ, տասը ժամ
սպասել կ'այս մարդուն... Եղբայր, շորեր է, կա-
պել ես, վերջացաւ... Ահա...

ԾԱՌԱՅ (մանում է):

Բաղդասարն ասաց երեխային ուղարկեցէք,

— 8 —

կառքը չէ կարող դալ այստեղ։ Ասայ, թող դայ
այստեղից նստենք միասին։

ԶԱՅԵԱՅ

Հիմա էլ այդպէս. Լաւ։ Այժմ Սամսօն Աս-
տուած բարի ճանապարհ տայ, (Զ. և Մ. գրկում
են Սամսօնին)։

ՄԱՐԻԱՄ

Աստուած բարի ճանապարհ տայ։ (Լալիս է։)

ՍԱՌԱՅ (մտնելով)։

Գնում ես։ Ես չ'զայի, հաւատայ որ չէին
կանչել. կարծես թէ սորա քոյրը չեմ թուրքի աղ-
ջիկ եմ։

ՄԱՐԻԱՄ

Ես ի՞նչ անեմ, ո՞րտեղ էիր։

ՍԱՌԱՅ

Հոգիս (համբուրելով) մնաս բարե։

ՄԱՐԻԱՄ

Ճանապարհին քեզ ցրտից զգոյշ պահիր։

ՍԱՌԱՅ

Կամակ։

ԶԱՅԵԱՅ

Սամսօն, կառքի առաջն չ'նստես. Նրան էլ
եմ ինըրել, որ քեզ զգուշցնէ։ Ոտք չ'դնես
կառքի անիւների վրա։ Մինչեւ կառավարը չնստի,
դու չ'բարձրանաս կառքը։ Խմացի՞ր։

ՍԱՄՍՕՆ

Լաւ։

ԲՈԼՈՐԸ

Աստուած բարի ճանապարհ տայ։

ՄԱՐԻԱՄ (Չուրը վերցնելով պատոհանից, ածում է
գետնին Սամսօնի քայլերի յետնիցը).

(Գուրս են գնում. Սամ., Սառ. և Մար.)

ԶԱՅԵԱՅ (մեհակ)

Է՛հ Աստուած, զիտե՞ս, ինչ եմ ինզրում
Քեղանից... Շատ բան, բայց այժմ միայն ողջ

առողջ տեղ հասցրու; Այս ինչու չեմ ես իրան
հետք Մինչև նամակ սասանամ մեռածի հաշվում
եմ լինելու; Դժուար է; (Ծխելով չեպուխը); Ես
տանել, տեղ հասցնել ... ինչովէս կարող էի; Աս
տուած, կրկին խնդրում եմ մաիր իմ դրութեանս
մէջ և այն աչքովը նայիր որդուս վրա, կտեսնես
որ ես շատ ողորմելի եմ զու ինքով կզգաս որ նո-
րանից քո ողորմութիւնու անպակաս պէտք է անես:

ՄԱՐԻԱՄ (մանում է):

Ինչ վաս է, Սիմօն, ձանապարհ զնելուց յե-
տոյ թէե զիսեմ որ որդիս զնում է լուսաւորվից
չինօվնիկ դառնայ, բայց էլի, կարծես մի բան ենք
կորցրել:

ԶԱՅԵԱՆՑ

Ինչ կորցրել, ինչ ես զլոիցդ...

ՄԱՐԻԱՄ

Ունչ, ես ուզում եմ ասել, որ այս ժամիս
սիրոս այնքան է ախուր, որ...

ԶԱՅԵԱՆՑ

Քեզ միշտ ասել եմ որ լեզուից զո՞ւ ը-
տաս:

ՄԱՐԻԱՄ

Ի՞նչ եմ ասում որ... միթէ դու այդ ինչ
ասում եմ; չես զգում քո մէջը:

ԶԱՅԵԱՆՑ

Ի՞նչ: Ես զգամ որ բան եմ կորցրել, որ
դուս... աախ, աղջիկ, քո ինկլով, որ մօտ վեր
ընկած լինէր Սամսոնը, լաւ կ'լինէր... այս:

ՄԱՐԻԱՄ

Ո՛չ. Ես...

ԶԱՅԵԱՆՑ

Ապա ասելո ինչ է: Իսկ ինձ հարցրու, ես
քեզ կ'ասեմ որ թէկուզ Սամսոնը չնդկաստան
գնայ, միայն թէ չինօվնիկ դառնայ վերադառնայ...
Դու չես զիտում ես կ'երդուեմ որ չես հասկա-
նում ինչ օգուտ ունինք նրան չինօվնիկ լինելուցը;
Բայց ես կարող ե՞մ քեզ հասկացնել այդ:

ՄԱՐԻԱՄ

Ասում ես էլիս Սիմօն: Ես չէի քեզ ասում
այն օբը թէ այն ինձոյքումը որ ես էլ իմ Սամ-
սոնիս չինօվնիկ ունենայի, չին համարձակուել

ինձ զատել սեկրետարի և գրադիրների կանանցից՝
չի ասում որ մի ժամ ոտիս վրայ էի, իսկ նրանց
աթոռի վրա բազմացրել էին...

ԶԱՅԵԱՆՑ

Այդ ինձանից լսումես մեկ օր, միւս օրը
դալիս՝ ասում, պէտք է որ ինքդ զգաս, պէտք է
որ ինքդ էլ ինձ նման առանց ուրիշե ասելու քո
պատիւդ գնահատես... ինձ ո՞վ է սովորեցրել...—
Այս ո՞վ է եկողը:

(Կանացի ձայն է լսվում):

ՄԱՐԻԱՄ

Եղիսարեթի ձայնն է:

ԶԱՅԵԱՆՑ

Ի՞նչ կայ...

ԵԳԻՍԱԲԵԹ (մանում է)

Առան ասաց, չհաւատացի: Աղջեկ, առանց
ինձ տեսնելու Սամանը գնաց... դոնէ...

ՄԱՐԻԱՄ

Աստուծոյ մի անունը վկայ, որ չկարաղացանք,
այնպէս յանկարծ պատահեցաւ: Առաւօտիս եկաւ
Սկրտիչեանց Բաղդասարը՝ թէ գնումեմ, ուղարւ
կեցինք:

ԵԳԻՍԱԲԵԹ

Թէ՛հ, ինչ որ է, Աստուած բարի ճանապարհ
տայ: Բարե իմ տղի նման գնալ ու դալը սովորութիւն շնի:

ԶԱՅԵԱՆՑ (ցածր)

Իրան տղին մեջ զցեց, այ գետինը մտնես,
չկամ...

ԵԳԻՍԱԲԵԹ

Տեսնում եմ որ ախուր էք: Յետոյ կովորիք
ես էլ էի այդպէս առաջի անգամը մեր Ամրատին
ուղարկելիս:

ԶԱՅԵԱՆՑ (ցածր)

Տե՛ս, տե՛ս, տե՛ս: (Բարձր): Ամենեին չենք
ախուր, սխալ ես հասկացել:

ԵԳԻՍԱԲԵԹ

Աստուած աս միշտ լինիք ուրախ: Մի հարց-
րեք, ո՞ւր եմ եկել:

ԶԱՅԵԱՆՑ

Ի՞նչպէս կարելի է.—ի՞նչ կայ:

ԵԳԻՍԱԲԵԹ

Մի լաւ լուր եմ հազորդելու ձեզ: Խօսքս
Սառայի մասին է:

(Գուան յետելիցը երեսում է Սառան):

ՍԱՌԱ (մտնելով)

Ի՞՞մ մասին, ի՞նչ:

ԵԳԻՍԱԲԵԹ

Աս ո՞րտեղից լսեց, գեռ բերանս բաց չեմ ա-
րել...

ՄԱՐԻԱՄ

Լաւ, ասա սրա բնութիւնը չես գիտում:
Դուան մօտ կանգնած էր:

ԶԱՅԵԱՆՑ (Կնօջ վրա աչքերը ոլորում է):

ԵԳԻՍԱԲԵԹ

Մի շատ հարուստ...

ԶԱՅԵԱՆՑ

ՀՇ...

ԵԳԻՍԱԲԵԹ

Մօսկովում առևարով պարապվող տղայ,
Սահակեանց լուսահողի Սիմօնի տղան... Էտ կը
Ճանաչեմ:

ԶԱՅԵԱՆՑ

ՀՇ.

ԵԳԻՍԱԲԵԹ

Նա ասել է թէ... մի շաբաթ չ'կայ, որ
այստեղ է, ասել է թէ շատ եմ հաւանում Սա-
ռային, եթէ տան, կուզեմ:

ԶԱՅԵԱՆՑ

ՀՇ.

ԵԳԻՍԱԲԵԹ

Պատուհանիցը տեսել է, իրան էլ ի հարկէ
Սառայի ով և ի՞նչ լինելը նկարագրող է եղել,
այնպէս որ վճռել է նշան տալու մասին աշխատել:

ԶԱՅԵԱՆՑ

ՀՇ... Ես ճանաչում եմ... 50 հավարի չափ
կարողութիւն կայ ձեռին, իրան սեպհական աշ-
խատանքն է համարեա թէ.. բայց...

ՄԱՐԻԱՄ

Ուրեմն, Սիմօն:

ՉԱՅԵԱՆՑ

Ուրեմն, Մարիամի (շտապելով) այս բոպէիս
կանչե՞նք, այո՞ս Ա.ախ, ախ: Քո բանը չէ, այդ ե՞ս
գիտեմ: Գնամ (ցածր) հեռաղիր ուղարկեմ Մօս-
կուա: Հարց ու փորձ անեմ: Եղիսաբէթ, դու լաւ
գիտես: Որ աղջիկս տանը չէ մնացել, որ սրանով
10 ուզող է եկել. զիտես: Ուրեմն լաւ իմացիր,
որ ես շտապելու ոչինչ չ'ունիմ ոչ էլ այդ լուրը,
Ճշմարիտը ասած, ինձ այնքան հետաքրքրում է:
Ես գնում եմ խանութաւ: Մնաս բարեւ: (Գուրս է
գնում):

ԵՊԻՍԱԲԵԹ (ցածր):

Առաջ ասողին դուրսը թաղեմի իր թէ չէ
ուրախ:

ՄԱՐԻԱՄ

ԱԵՆՔ էլ գնանք պարտէզը: Սառաւ, Խալի-
չայ կայ ծառի տակին: Մի մանրամասն պատմիր,
տեսնենք,—նա էլ խօչէ թոյլ տալ մարդ լրացնի
սկսածը...

ՍԱՌԱ

Մօրաքոյր, եթէ իմ ուղածը չի լինիլ քա-
սահակեանց է, ինչէ, այն ժամանակը...

ԵՊԻՍԱԲԵԹ

Հանդիստ եղեր, բաւական կը լինես:

ՄԱՐԻԱՄ

Խալիչան:

ՍԱՌԱ

Լաւ, մի անդամ՝ ասացիր լսեցինք: (Գուրս է
գնում):

ԵՊԻՍԱԲԵԹ

4 | 2
100 | 31852
3 | 3

Աղջիկ, քո ականջիդ միայն կ'ասեմ: որ սրան
նման կապը կտրուած աղջիկ չես ճարել:

ՄԱՐԻԱՄ

Պատիժ է, պատիժ: Ես այն չեմ ասում: գնայ,
որ տունը հանդարտուի: Դու չե՞ս զիտում: որ դրա
հայրը մարդ լինէր, ինձ հետ մարդավարի վարուէր,
այսօրուան օրը դա քանի զինանի կ'լինէր, որ հա-
մարձակուէր ինձ հետ այդպէս խօսալ: Է՛հ, Եղի-
սաբէթ ջան, գնանք, ցաւերս նորում է...

(Գուրս են գնում երկուսն է),



ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

I

Պ Ա Տ Կ Ե Բ

Հրապարակ. մարդիկ խումբ խումբ ժողովուած՝ խօսում
են. Մի խումբ (3 մարդ) բէմի առաջի կողմում են,
միւսները բէմի խորքում:

1. Ես էլ եմ կարծում; որ կ'վնասուի:
2. Կ'վնասուի, այն էլ այնպէս! տունը կ'քանա-
դուի գլխին...

3. Դուք կարծում էք միայն այդ ապրանքի
մէջ արած վնասն է նրա բանը բուրդ շնորդը. ոչ,
եթէ նկըր իրան ունեցածի չափովը ապրէր... ի՞նչ
եմ ասում; զրանց մի օրուայ կերած միար ես,
չեմ թաղցնում; եղայր, վեց օր եմ ուսում: 6—7
գրվանքով էր կրում միար աչքովս տեսել եմ;
դրանց ծառան:

3. Պառայ ունէր վարձած: Քանի անդամեմ
տեսել ծառաները իրան տակը տուած քաղցրաւե-
նիք, մրգեղին տուն են տանում: Առանց քաղցր
գէսաէրաի ճաշ չեն անուշ արել իրանց օրումը:
Ուստիոս, ուղիղ չեմ ասում:

Պ. (2) Պլսով է անում:

3. Ես, որ այս օրուան օրը, ասելը պարծանք
չ'լինի, ես իմ դարձեալ քսակիս համար ծանրու-
թիւն կը համարեմ ամեն ամառ ամարանոց քա-
շուել, բայց այդ տնաքանար կինը և որդին առածչ
գիւղեց՝ զիւղ, սարից՝ սար է չուում ամեն ամառ...

(2) Պ. Տան մէջ հագնուիլը և շարժուիլը
դու ե'կ տես. մի օր ասում եմ այ Միքայէլ, չե
լինիլ, որ երեխիդ համար եւրօպական ունամնան
չ'առնես. ինչով եմ պակաս, ասում եմ, քեզանից
որ խարազի ունամնան եմ հազցնում աղերանցա-
նայ ասում եմ, երկու օրումը կ'մաւշի... իսկ սա
արժան և զիմացիուն է: Ինչ անենք, ասում է, ու-
շնչ, երեխայ է, պէտք է սիրաը շահել:

1. Պարձեալ ապրանքում արած վնասն է,
բանը... երեակայեցէք:

(2) Պ. Այս երկու վարմասաններին նայե-
ցիք, Ֆրանհսերէն են... չ'լինի մեզ ին
3. հայհոյում:

(Բէմի մէջ տեղովը անցնում են երկու երիտասարդ,
եւրօպական հագուստով):

Մէկը (նրանցից):

Mais ils ne parlent toujour que des bêtisses,

ՄԻՒՍԸ

Oui, ces célèbres imbecilles de notre ville.

1. Ա՞կ զիտէ:

3. Տես, մեզ վրա ցոյց տուեց մատովք: Ա՛խ,
անհաւատներ: Տեղը տաքացել է դրանց, ի՞նչ
կայ. անցնում են, փոխանակ ասելու մեր հոգա-
բարձուն է՝ բարեկենք, հայհոյում են: Լաւ: Ես
դրանց ցոյց կ'տամ:

1. Գլուրս անես, շատ անես: Ուրիշը որ գայ
դրանց աեղք կրկնն դրանց նման կ'լինի, աւելի լաւ
չէ միանդամից զլուխներնիս հանգստացնենք, բե-
րենք մեր տիրացուինն նշանակենք, վերջանայ զնայ...

Պ. (2) Ճշմարիտը ասած, մեզ ինչ, մեր երե-
խաներին չենք տալիս սրանց ձեռքը, ուրեմն կարող
ենք ուրիշների համար զլուխներնիս չ'ցաւացնենք:
Թողեցէք, մնան, անհաւատների ծնունդները...

1. Փոսար եկել է: Պօղոսը նամակ է կար-
պում:

3. Ճշմարի՞ոտ: Հը՝ Պօղոս, քայլերդ մեծաց-
րու, (զառնալով) ծիծալում է:

Պ. 2. Ինչո՞ւ է ուրախ:

ՊՕՂ. Իմ... տղերք.

3. Ինչ ես թուքդ կուլ տալիս. բա՞ն կայ:

ՊՕՂ. Մի-մի գունտ իւղ պատրաստեցէք
սրադներնիդ համար:

3. Խօսա:

ՊՕՂ. Կարելի է, զիտէք:

2 և 3. Շուտ, ասա, ոչինչ չենք զիտում:

ՊՕՂ. Աահակեանցի, այն...

3. Տունը քանդուել է! իմացայ!

ՊՕՂ. Ապանիր: Այն զլուխը մինչև երկինքը
հասցրած Սիմօնի փեսան...

2. 3. Իմացանք, յետոյ...

ՊՕՂ. Զեռքի կեղակի նման 50,000 մանէթը...

3. Թէ Ասոււած կ'սիրես:

ՊՕՂ. Որ ասումեմ բան եմ ասում: Ակ-
ցիօններում բանը.

Պ. (2) Ես երազ եմ տեսել: Տեսնում եմ...

3. Լաւ, երազդ թող: Ասա, հիմա Զայեան-
ցի մարմինը որթունքներ են մոել...

Պ. (2) Պ'պատմե՞մ: Լաւ:

1. Այս ըսպէիս չէինք խօսում Միքայէլի
մանկանալու վրա, — կարծես մեզ վիճակուած է ա-
մեն օր բան գործ թողնել ու նոր նոր մանկացող-
ների վրա խօսալ:

3. Գիտէք ի՞նչ, տղերք: Դա խօ այդպէս
բայց մէկի մէջքն էլ պէտք է բարակվի:

ՊՕՂ. Ինչ շուտ հասկացա՞ր! Նա կ'մեռնի,
նշանը յետ չե առնիլ կ'պատկի—փող, ինչ ասիլ
կ'ուզէ, որ մի 10 հազար... բաժինք չըր խոստա-
ցել:

3. Ոչ: Շատ էլ կ'տայ... 15 եմ կարծում...

անգամ չէ սխալուել, բայց տեմումես, որ բանը
ազօթքով չէ:

ԱՌ. Բան չեմ հասկանում: Ախմօնի...

ՊՕՂ. Ասա, վերջացրու. Առհակեսանցի տունը
քանդուել է, ջայեանցին տակովն արել:

ԱՌ. Ի՞նչպէս: (Գտակը վեր տոնելով) փառք
Քեզ Ասուած! ի՞նչ:

3. Ազօթք մի արա, Ասուածքո լոռիթիւնք
ազօթքիցդ լաւ է լսում:

ԱՌ. Ի՞նչպէս: Մանրամասն:

ՊՕՂ. Ջեռքին ինչ եղել է, միանգամից տաս-
նուլ է տուել ակցիոններում: Գնանք եկեղեցի,
այնուղ բոլորը կպատմեմ:

ԱՌ. Այդ հրեշտակը ովկէր, նամակ: (Արկին
ազօթելով) զնանք, վագինք: Մի կէս մանեթանոց
մոմեմ վառելու:

3. Ես գնամ փոստից նամակս վերցնեմ: յե-
տոյ կգամ: (ամենքը զնում) (Նրանցից յետոյ անց-
նում է զլուխը բարձր պահած՝ ջայեանցը—եկե-
ղեցի):

ԵՐԵՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

II

Պ Ա Տ Կ Ե Ր

Բէմը՝ Զայեանցի տունն է:

ԶԱՅԵԱՆՑ (մտնելով):

Կատ լու. ի՞նչ պէտք է պատահած լինի, չէ
որ մէկ պատճառ պէտք է լինի. Եթէ ոչ, ինչ կը
նշանակէ, միմեանց մատիկ էին անում, քոքուում
լրբարար, և մինչեւ վերջը ինձանից աչքները չեն
քաշում; բաւական էր, որ աչքս ընկնէր նրանց
աչքերին, փարիսեցու նման, գողերի նման դարձ-
նում էին գլուխներնին և քթածիծաղ տալիս:
Ուրախ են նրանք: Նրանք այսօր խնդրումեն! ովկէ
պատճառը: Ես. ե՞ս: Միթէ այդ սատանի պո-
չերը նոր են ուրախանում իմ բաղրաւորուելուս
վրայ: Որդուս ու աղջկաս: Բաւական է կատակը:
Նրանց աչքերից չէ՞ր կաթում այդ օրերը նախան-
ձելի կաթիները: Խակ այսօր... իմ տարաբաղդու-
թիւնը իմ ծախորդութիւնը կամ... ինչ անցել
այնպէս, որ լսին, կամ չլսին: Ինչ եմ կորցրել,
ինչ է ծռվել: ուղղուելու տեղ: Տէր երկնային,
ապա ինչ նոր սատանայ է մտել դրանց կրծքերի

մէջ, որ առանց ծիծաղի չեն կարողանում նայել
վրաս: Այն Պողոսը, այն չարակամ, ուրիշների ա-
րիւնը և իմը հետը միասին խմելու պատրաստ
մարդք... «Հա, հա...» ինչ կայ, այ մարդ, ասում
եմ «Հա, հա, ոչինչ, այնպէս»: Տէր Աստուած,
ով է խօսողը և ում հետն է ինչպէս խօսում:

ՄԱՐԻԱՄ (մտնում է):

Եկելս եկեղեցուց, ինչու չես կանչումի որ
թէյ բերեն:

ԶԱՅԵԱՆՑ

Ի՞նչ բերում ես բեր:

ՄԱՐԻԱՄ (ցածր):

Ինչու, ով կ'լինի սրա էշն չու ասած: Մո-
ացայ, Սիմօն, ասել՝ նամակ կայ քեզ վրայ:

ԶԱՅԵԱՆՑ

Կամակ:

ՄԱՐԻԱՄ

Կամակ, սեղանին վրայ է: (Ցածր) աչքերը
կռւ են գնացել:

ԶԱՅԵԱՆՑ

Ուր է (մօտենում է սեղանին և վեր առնում):

ՄԱՐԻԱՄ

Այդ դուրս է գնում:

ԶԱՅԵԱՆՑ (բաց անելով):

Մօսկուայից: Սիսեռեանցը: Ի՞նչ բանի մաս-
սին է: Նո՞ր: Ո՛չ, Աստուած, ոչինչ նոր բան չեմ
ուզում: Պահիր... տար նոր ուզողներին տուր-
(սկսում է կարդալ) «Աստուած ստեղծելով» Աղա-
մին և Եւային... այս կ'լինի անբան մարդ: «Վարդ-
կանց, նրանց համար ստեղծել է նաև տարաբաղ-
դութիւն և բազզաւորութիւն»: Այս շարականը...
բայց... կարծես սրալիցս մի բան կտրվեցաւ, ընկաւ
փորս, վայ քո տղին տղան տուն գայ... չ'լինի:
Ոչ, ոչինչ չ'կայ... «Երկումն էլ Աստուածոյ
տուածներն են»: Ոչ բան... սոսկալի բան կայ...
այսօրուան սատանաների թռոները ի զուր... բայց
ես իմ լեզուովս ուզումեմ որ իմ տունս քան-
դած անուանեմ... (աչքերը ուզում է դարձնել
նամակին՝ կրկին շուռ է տալիս): Չեմ կարողանում
կարդալ... չեմ ուզում... (մտնում է Մարիամը
թէյի բաժակը ձեռին) Մարիամ, կանչեր Սառային:

ՄԱՐԻԱՄ

Ի՞նչ: Կամակումը բա՞ն կայ: Սիմօն, թէ
բան կայ անա...

ԶԱՅԵԱՆՑ

Բայզուշ, քեզ ասում եմ (մտնում է Ասուան):
Ասոա, շուտ մօտեցիր, այս նամակը կարդա:

ՍԱՌԱ

(Ուռնելով նամակը լուր կարդումէ նրան):

ԶԱՅԵԱՆՑ

Ո՛Հ, ձայնդ կարուի, որ խմանամ: Քեզ համար ես կարդում:

ՍԱՌԱ

Լաւ, հենց իմացայ...

ԶԱՅԵԱՆՑ

Շուտ...

Մարիամ... Սառա.

ՍԱՌԱ

«Պատուելի Սիմօն, Աստուած մարդկանց ստեղծելով, նրանց...»

ԶԱՅԵԱՆՑ

Յետոյ, յետոյ:

ՍԱՌԱ

Կարդում եմ էլի. «Համար ստեղծել է նաև տարաբաղդութիւն և բաղդաւորութիւն, երկուսն էլ Աստուծոյ տուածներն են, պէտք է անտրտունջ կրենք և մէկը և միւսը, այսինքն ոչ շատ ուրախանակք բաղդի ժպտելիս ժամանակը ոչ էլ նրա յօնքերը վեր թողած ժամանակը տիրենք:» Անբան մարդ!

ԶԵՏՈՅ

այդ կարդացիր, հազար...

ՍԱՌԱ

Ու, այս չեմ կարդացել, միթէ...

ԶԱՅԵԱՆՑ

Լաւ խօսելու ժամանակ ես գտել! աղջիկ! կարդա շուտո... եթէ ոչ...

ՍԱՌԱ

Եթէ ոչ... Չեմ կարդում... հը՛ հը՛: (Վայրէ ձոգում նամակը):

ԶԱՅԵԱՆՑ

Ի՞նչպէս:

ՄԱՐԻԱՄ

Գժուել ե՞ս, զլսիդ ձի է աքացիով տուել:

ԶԱՅԵԱՆՑ

Գլուխդ կ'ձարդեմ վերցրու, կարդա! վերցրու ասում եմ... (յարձակվումէ) Այս անկապի աղջիկ! (Սառան հեռանում է բէմից) (նամակը վերցնելով) ը ը ը ը... երկուսն էլ Աստուծոյ տուածներն են, պէտք է անտրտունջ կրենք և մէկը և միւսը, այսինքն ոչ շատ ուրախանակք բաղդի ժպտելիս ժամանակը ոչ էլ նրա յօնքերը վեր թողած ժամանակը տիրենք:» Անբան մարդ! «Քո վեսան, զօր, իւր 50,000 մանեթը» ի՞նչ: «50 հազար մանեթը ակցիաների մէջ կորցրել է:»

ի՞նչ: իմ վեսան, այն իմ պարծանքը, ո՞հ, աղշ
ջեկ, (բլագիլով) աղջեկ... դու... Մարիամը վայրէ
գցում ձեռքի բաժակը) Վայ! իմ տունս քանա
դուեց, մի ճար!: Պատիւս ցեխի հաւասարուեց—
փեսաս աղքատ է: Ուրեմն ես ինչ եմ ես խոզի
զլուխս: Եկ դուրս եկ մարդամշջ: Ահա քեզ Աս
տուծոյ դատաստան: Անհաւատների որդիքը ինձաւ
նից վաղ են իմացել իմ տանս խորտակուելը: Իւզ
քաել սրտները այնտեղ կանգնել, ինձ վրա ել
գեռ քոքում: Ո՛չ...

ՄԱՐԻԱՄ

Արմօն, հանդսասացիր.

ԶԱՅԵԱՆՑ

Այ, քո ձայնդ միայն Տէրը կորի, դու էիր
մեր տունք քանդողը, դու վռազեցրիր, դու քաւ-
թառ, աչքերդ (մօտենալով) հանեմ ինչ անիմ...

ՄԱՐԻԱՄ

Ո՛չ, ես իմ որդու վատը կուզենամ...

ԶԱՅԵԱՆՑ

Ասս, կորի՛ր... կորի՛ր) աչքս քեզ չտեսնէ:

ՄԱՐԻԱՄ

Լաւ (դուրս է գնում):

ԶԱՅԵԱՆՑ

Եկ դու կանանց խելքովը շան բանիր... Ա-
մօթյ այ, Հարամ լինի քո ուտելիս հացդ (գլխին
ուզում է խիել, հանդիպում է գտակին, գտակը
զետնով է տալիս): Գետինը Խրվիր, վերջադրու-
(ինքը ընկնում է բազկաթոռի մէջ): Աշխահիս
աչքերնին չորս կ'զառնան, կ'պղզեն, ես էլ իմ
կնօջ շաբիքը հազնեմի զուրս գամ մարդամշջ:
ել ինչ ցաւ է մնացել... Խելքս զլուխս չէ հա-
ւաքվում որ տեսնեմ ինչ եմ անելու նշանը յետ
տամ... հըմ հըմ յետ տամ) որ աղջկանս ինձ
հետ միասին փողոցները ման ածեմ ուզող—հաւա-
նող կանչեմ... (ասամները կրծելով): Ա՛յ այ...
այլ ինչ պէտք է անեմ... կանչեմ այն, այն . . .
աւանսակին, փող... որ տանի, խժուի, ու գայ աղջ-
կաս դուռը դուռը ձզի և ինձ... Ախ, թէ ես կը-
լինէի Աստուած... դժուար չ'ժվայ քեզ, Տէր, ես
իմ բանս կ'իմանայի... բայց այժմ, որ ինձ խաւ-
դալիք ես շնում: ինչ խօսամ! (Վոռոթիւն):
Ուզեղ որ էշեց վեր դալը և էշեց վրա նստել կրկինն:
ինչ ուզում ես, արա... դարձեալ էշեց բանն է
դառնում: Գնամ շասպիմ: (վեր է կենում տեղե-
ցը) մի հեռազիր ուզարկեմ:, այժմ մէկէ... խայ-
տառակուել ենք, վերջացել է: (Դուրս է գնում):
(Մանում են մայր և աղջիկ):

ՄԱՐԻԱՄ

Տեսար, տեսար, որ երեսիցն թոյն էր կամում... զեռ անզգամի նման երեսիցս ես կպել:

ՍԱՌՈՒ

Այսու, ձեզ ես ասել Ե՞մ—ինձ համար ամուսին ձարեցէք:

ՄԱՐԻԱՄ

Տես, տես, այ քո լեզուդ պապանձվի:

ՍԱՌՈՒ

Ես ձեզ չեմ խնդրել:

ՄԱՐԻԱՄ

Այ լեր:

ՍԱՌՈՒ

Երբ որ ես ձեր ականջը ծակելիս, ձեզ աղաչելիս լինէի, այն ժամանակ...

ՄԱՐԻԱՄ

Այ քո ծնած ժամը սև օձ էր ծնել, աւելի լաւ չէր լինիլ, անամօթի զաւակ:

ՍԱՌՈՒ

Զեզ համար աւելի լաւ կ'լինէր, զիտեմ:

ՄԱՐԻԱՄ

Թոռուքի աղջիկը, տես, ինչեր է խօսում:

ՍԱՌՈՒ

Ի՞նչ: Ես ի՞նչ սովորել եմ ձեզանից, քո ամուսնուցը այն եմ խօսում: (Հեռանումէ բէմիցը դուռը յետելիցը պինդ շըլիսկացնում):

ՄԱՐԻԱՄ

Առաջ... (ցոյց տասր մատը Սառայի յետելիցը) Աստուծոյ կրակի եկած:

(Դուրս է գնում միւս դռնով) Եղիսաբետը մասն այսու հայտնի բանու մասին: Հայոց մարդիկ մասն այսու հայտնի բանու մասին: Հայոց մարդիկ մասն այսու հայտնի բանու մասին:

Եղիսաբետ այսու հայտնի բանու մասին: Հայոց մարդիկ մասն այսու հայտնի բանու մասին:

Եղիսաբետ այսու հայտնի բանու մասին: Հայոց մարդիկ մասն այսու հայտնի բանու մասին: Հայոց մարդիկ մասն այսու հայտնի բանու մասին:

Եղիսաբետ այսու հայտնի բանու մասին: Հայոց մարդիկ մասն այսու հայտնի բանու մասին:

Եղիսաբետ այսու հայտնի բանու մասին: Հայոց մարդիկ մասն այսու հայտնի բանու մասին:

Եղիսաբետ այսու հայտնի բանու մասին: Հայոց մարդիկ մասն այսու հայտնի բանու մասին:

Եղիսաբետ այսու հայտնի բանու մասին: Հայոց մարդիկ մասն այսու հայտնի բանու մասին:

Եղիսաբետ այսու հայտնի բանու մասին: Հայոց մարդիկ մասն այսու հայտնի բանու մասին:

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Բէմը՝ Սահակեանցի տունն է:

ՍԱՀԱԿԵԱՆՑ (մէնակ)

Ահա հոգեհան հրեշտակը, անզգամի մէկը
բերել եմ զլիսիս կապել. անունը դրել կեանքիս
ընկերուհի... կին... Ուր էր, ոտս կտրվել էր աւ
նունս կոտրվելուն պէս, այստեղ չ'գայի մօրս ձեռա
քին գերի դառնայի: Ճեռացած էի, սառել էի, —
գոնէ, թէև նոյնքան սիրել եմ մօրս միշտ. — Այդ
է մարդուս տանջում: այդ է խորովում հոգիս,
ի՞նչ պէտք կար մօրս ականջը դցէի, թէ տեսել եմ
կամ ումեմ տեսել, ոձ թէ սատանայ: Ես չ'գօ-
տէի, չ'գի՞տէի, որ այստեղից կին առնել կ'նշանա-
կի յաւիտեան տանջանքի մէջ լինել: Մայրս —
Ահա Զայեանց Սիմօնի աղջիկը, գեղեցկութիւնը
ասես, տանտիկին լինելը թէ համեստութիւնը
ոչ համեստութիւն բառը մտաքերելիս կարծում եմ
զլիսիս փուլ եկող տան որոտումն եմ լսում: Քա-
նի անգամեմ ի սրտէ անիծել, համերձակ կ'ասեմ
անիծել եմ մօրս լեզուն) որ յանդինաբար ստել
է որը արտասանել է «համեստութիւն» բառը...
Այդ բառը ինձ շացրեց, զլուսս պտտեցրեց:

գեղեցիկ, համեստ) — Լաւ մայրիկ, ուզումես ան-
պատճառ քո որդիկ քեզ մօտ ամուսնանայ, լաւ
կ'անեմ... ինչու այստեղումը Աստուած առաւ
խելքս, չ'ասացի, մայր, որ իմ յոյսերս խարուին,
կ'թողնեմ կ'փախչեմ... Ուր էր, եթէ ասէի, եթէ
պնդէի, երդուէի, կ'համարձակուէր նա ինձ խարել:
Կիր կին: Զայեանց անունը խելքը տարել էր . . .
իւր որդուն սուտ է ասումի կորուստաբեր սուտը՝
որպէս զե Զայեանց խնամի դառնայ: Համեստ է...
(բէմի յետելից լսումէ կնօջ աղաղակը:) Ահա,
ծառաներին օրհնումէ: (Մտնումէ Սառան) (ցածր)
եկէք, սիրեցէք այս կնօջը... առաւօտից մինչեւ ե-
րեկոյ կատաղութիւնից աշքերը պլզած, կարծես
ուզումէ աշխարհս կուլ տայ:

ՍԱՌԱ.

Այսօր գնալու եմ: մեր տանիցը հրաւիրել են:

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Գնումէս՝ գնա:

ՍԱՌԱ.

Ի՞նչ է եկել քեզ: Ես հարցնումէմ զես
քեզանից, զու շնորհակալ լինելու տեղ, գնում
ես՝ գնա՝ այդ ինչպէս եղաւ, որ զլիսս պարոն ես
դարձել:

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Սառա, զլուխս ցաւում է:

ՍԱՌԱ.

Պատուխդ ցաւում է: Վաւ ուրեմն, որովհետեւ
ես եմ քո զլսացաւանքը պատճառում՝ կ'շտապեմ
ես բժշկել, կ'զնամ մի շարաթ՝ կ'մնամ իմ հօ-
րենց տանը...

ՍԱՀԱԿԵԱՆՑ (ցածր)

Սատանայութեան պարկը դադարկուելէ, գնում
է լքյնէ: (Բարձր): Մի շաբաթ:

ՍԱՌԱ.

Հրամանքս, մի շաբաթ, մինչեւ որ սովորիս
մարդու հետը մարդավարի վարուիլը:

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Բաւական է! Մինչեւ (կոկորդը ցոյց տալով)
այստեղ հասցրիր! բաւական է:

ՍԱՌԱ. (հեղնաբար)

Ու, ի՞նչպէս կարելի է. քո կարծիքով ես
աղախին եմ կինը—էշ է, ուր կ'ուզես, քշեր! ԱՇ
ալելուեայ խելքիդ: Քո քշելովը ես որ գնայի,
պէտք է 50,000 նմանն...

ՍԱՀԱԿԵԱՆՑ (վեր կենալով տեղիցը):

Լոիր լերբ!.. բաւական է:

ՍԱՌԱ.

Սրա ձայնին նայեցէք: Գնամ մօրդ բերեմ որ
իրան աչքովը տեսնի: (Գուրս է գնում):

ՍԱՀԱԿԵԱՆՑ (մէնակ)

Մէկ մնօվովս անցնում է՝ տալ զլսին շանաւ-
սատակ անել... Ի՞նչ անիմ այս պատուհասի ձեռ-
քին: Այսքան տանջանք տղամարդ տեղս կրելուն
անձնատուր եմ եղել... ինչ պատճառաւ... չէ կա-
րելի թքել բոլորի, փողի անուան, ամեն բանի...
բայց ուր զնամի մօրս թողնեմ՝ ուր զնամ:

ՍԱՌԱ. (մտնում է) (Սահակեանցի մօր ձեռքից
բռնած քաշելով)

Ե՛կ ե՛կ, մէկ որդուդ խօսքերին ու կզակին
նայիր! Դա, ասենք, յիմար է. դու մեծ ինիկ ես,
պէտք է որ թոյլ տաս. քիչ էր մնացել, որ ձեռք
բարձրացնէ ինձ վրա...

ՄԱՅՐ

Աս անսպատիւ, քեզ համբերելուցը հողուց
հաւատից ընկայ... քեզ էլ եմ ձանաչումի իմ
որդուն էլ...

ՍԱՌԱ.

Ահա... դու էլ... մայր ու որդի խօսք էք կա-
պել ինձ մորթել... այս:

ՄԱՅՐ

Եղուդ կատկիցդ կպչէ: Որդուս օրը խաւար-
յըրելես, բաւական չէ: Մարդի ցեղեց ես թէ... .
Տէր Աստուած, այսպէս կրակ կ'լինի՞ մեզ մեջն ես
գցել:

ՍԱՌԱ

Դրե՞ռ Աստուած, այս, Աստուած ձեզ կրակի
մէջ է գցե՞լ, քո անառակ որդիդ և դու հօրս
փողովը մարդի շարք էք ընկել, դեռ Աստուած մե-
ղաւոր է: Զէք ամաչում:

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Աառա, Աստուած վկայ, արիւնս զլսովս է
տուել, ոտիս տակը կտամ:

ՍԱՌԱ

Այդ է պակաս! Ես ձեզ մարդ շննեմ դուք
ինձ ոտի տակ գցեցէք, ջարդեցէք:

Այ քաւթառ, յիմս լսումես որդուդ խօս-
քերը:

ՄԱՅՐ

Տէր Աստուած, սա ինչ կաթն է ծծել: Գե-
տինը խրվես, գետինը:

ՍԱՌԱ. (բաձր ձայնով)

Այ մարդ, ես քեզ հրամայումեմ այս քաւ-

թառին դուրս արա, եթէ ոչ կ'գնամ; ձեր երեսի-
ցը կ'գնամ... յաւիտեան կ'գնամ ձեզ էլ աղքատ-
ներին երանի տուող կ'շնեմ...

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Ո՞ւր է: Գնա, աղատիր մեզ...

ՍԱՌԱ

Գնամ... լաւ... կ'տեսնէք ինչ կ'գնեմ ձեր
գլխին!

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Կորչում ես, կորիր... յետոյ:

ՍԱՌԱ

Կ'տեսնէք, աղքատ, հայ մուրացողեմ ձեզ
դարձնելու, թէ ինչ!

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Ո՛չ... ձայնդ չ'լսեմ, կորի՛ր... սատանայ:

ՍԱՌԱ

Լաւ: (Դուրս է զնում):

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Տեսա՞ր:

ՄԱՅՐ

Տեսնումեմ որդի, տեսայ... այս էլ մէկ տա-
րաբաղդութիւն, այս էլ մէկ խայտառակութիւն:

ՍԱՀԱԿԵԱՆՅ

Ես չ'զիտեմ բարեբաղդութիւն ասեմ թէ
տարաբաղդութիւն սրան, միայն... Մայրիկ, քո
որդուդ չե՞ս սիրում:

ՄԱՅՐ

Ի՞նչ խօսք:

ՍԱՀԱԿԵԱՆՅ

Ուրեմն, թող օրս չ'սւայնի, թող ուղեղիս
միջն որթունքները Աստուծոյ իրան օրը չ'վրդու-
վեցնի այդ հրէշը թող կորչի, դնա, մեզ, ինձ
և քեզ հանգիստ թողնի: Դու ինքդ լաւ ես տես-
նում որ երկու բան է թողել մեզ մեր բաղդր
ընտրելու. մէկը՝ նրան ձեռքին տապակ տապակ
գալը, միւսը՝ խայտառակուիլը: Ես, որ գեռ յոյս
ունեմ կրկին մեր պատիւը իմ աշխատանքովս վե-
րականգնելու, աւելի լաւ եմ համարում ընտրել
վերջնը, այսինքն խայտառակուիլ: Բայց այն էլ
պէտք է ասած, որ մեր բաղդրացւոց իմ վերա-
բերեմանք այս կամ այն դատողութեանը մի կօպ.
դին չեմ տալ, ուր մնաց, որ ես շփոթուեմ դրանց
վատաբանելուցը վըսա խօսալուցը: Միայն դու ես,
որ պէտք է իրբե պատիժ կրես այս քո հաշուով
խայտառակութիւնը...

ՄԱՅՐ

Պատիճ, որդի, պատիճ, մթէ քիչ է ինձ
պատժել Աստուծութիւն քեզ զրկելով...

ՍԱՀԱԿԵԱՆՅ

Այս ասումեմ որպէս զի վերջապէս խոստո-
վանուիս, որ դու ինձ խարելես, ինձ ստելես, երբ
որ քեզանից հարցրելեմ իմանալու այս կապը կը-
րուածի բնաւորութիւնը: Խոսանվանուիր!

ՄԱՅՐ

Ես դիտէի, ես մեղաւոր եմ... Ներիր...

ՍԱՀԱԿԵԱՆՅ

Դու դիտէիր, և ինձ խարեցի՞ր. մայրիկ...

ՄԱՅՐ

Ո՞ւր է որդի, Աստուծութիւն խելքս առած
լինէր, չկարողանայի քեզ այդ խորհուրդը տալ,
լեզուս օրացնէր, որ համեստ բառը չ'ասէի քեզ:
Ես մտածեցի, ասացի ի՞նչ անենք, թող քիչ հա-
մառ լինի, մի քիչ էլ հպարտ լինի, բայց այդպի-
սի մարդկանց հետ խնամնութիւն անելը...: Այն էլ
ասացի իմ մտքումն աղան, որ ուզենայ, իրաւունք
չի տալ ձեռքը, կապը կ'քաշի, որ մի որեւիցէ լոր-
բութիւն տեսնի, չի թոյլ տալ, որ մեր զլինեն
նստի... բայց Այն չի ուզում ասել: Դու որ

այդքան թոյլ չ'վարուեիր, երբ որ սկզբիցը ուշ
զումէր ոտը բարձր գնել մի լաւ գաստայիր, շատ
կարելի է...»

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Ակիզը! սկզբիցը չըր, որ իրան գու սկսեցիր
նախառելը վրադ թռաւ, յետոյ, ինձ էլ քեզ
հետ միասին մունջացրեց:

ՄԱՅՐ

Ու, որդի, ես ի՞նչ իրաւունք կարող եմ ուշ
նենալ, սինսուրը ինչ իրաւունքի տէր է հարսի
առաջը, նա իրա տղի շուտաքն է միայն: Եթէ հար-
սը ամուսնուցը ահ է կրում քաշփում է, այն ժա-
մանակը նրա շուտքիցն էլ է վախենում: Էհ, հի-
միկուայ ժամանակն է այլպիս: Ուր է, մեռ ժա-
մանակը լինէր! մինչև հարսութեան 30 տարիս
սկեսուրից անխօս եմ եղել, իմացել է նա թէ բե-
րանումն լիզու կայ թէ ոչ: Եթէ եկած օրիցը
մի աշքերդ ողոր մոլոր անեիր, ձեռքիդ ոյժը յետոյ
տոյց տայիր:

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Միթէ չեմ արել, չեմ ասել... Ախ.. միթէ
քեզ չեի ասում թէ երէկ պսակուցանք, այսօր
ասում է. գու ում փողովն ես մարդ դարձած, մի
փոքր նկատմանք որ անում էի, հէնց, ասում էի

այստեղ ծուխ է, այնտեղ նստիր, այդ խօսքերը
երեսովս էր տալիս:

ՄԱՅՐ

Այդ էլ գիտեմ: բայց դրա նման հարսե՛ր ենք
տեսել! զրանից վասթարների ձեռքի են եղել
տապակ տապակ գալիս հայրը մայրը բայց եկել
են թէ չէ ամուսնու տունը լիզուները կորուել են,
իրանք էլ... Ասենք... (լուսթիւն):

ՍԱՀԱԿԵԱՆՑ (ցածր)

Մինչև այստեղ է կարողանում մայրս հասկա-
նալ ամուսնու և կնօջ կեանքը: Կարող է հասկա-
նալ, որ ասեմ թէ, ես այն պատճառաւ եմ թոյլ
որ գիտեմ սիրել, որ ես միայն մի տեսակ սէր եմ
ձանաչում, որ չեմ կարող այսօր ծեծել, վաղը
դրկել, միւս օրը խայտառակել և խայտառակուիլ
(բարձր): Բայց մայրիկ, զու որտեղից գիտէիր այդ
աղջկայ բնաւորութիւնը, որ ասում ես՝ թէ սուտ
էի տառւմ:

ՄԱՅՐ

Ե՞ս՝ այս, որդի, նա էլ պէտք է ասած, որ
ես կարծիքով եմ ասել, ոչ թէ ձանաչելով: Մի
քանիսը ուղիղ է, կ'ասեն, մայրը տես աղջկեր՝ առ-
բայց ես մօրը ձանաչելով չեի կարող վստահ լի-
նել, որ աղջկեր մօրը գայ, որովհետեւ մայրը մի

կորած, թուրքի ասած, զթաւաքեալի» կին է, աշմունքու ձեռքի տակին ծեծ ուտելիս ամբողջ կեանքը, այդ ամենքը գիտեն, ի՞նչպէս կարող էր նա աղջկայ վրա ազդել, ազդեցութիւն ունենալ. անպատճառ, իմ կարծիքով հօրը պէտք է, եկած լինէր ազջիկը, հօրը պէս խող, իրան չափը չ'իմացող, իրան վրա մեծ կարծիք ունեցող... Ի հարկ է հարց ու փորձ եմ արել, բայց այնպէս, որ վաղը չ'ասեն թէ անզլուխ կնիկ եմ, դա իրանց սովորութիւնն է — հարց ու փորձ անելը, բայց ովկ' հաւատայ կամ վատաբանողին կամ գովասանք տուողին, — մի քանիսիցը լսածը, համարեա, իմ կարծածից մօտ է եղել.. և...

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Մայրիկ շատ խելօք ես, հաւատացիր, որ մեր զիտնական խելօքներիցը շատերը չ'զիտեն այդ... մարգարէութիւն ես արել, ասա... բայց... ափսոս, մայրիկ, որ մարգարէութիւնդ քո որդուգ օրերը խաւարեցնելու համար է եղել:

ՄԱՅՐ

Ե՛հ, պէտք է որ ներես, քո քաւթառ մայրը...

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Լաւ մայրիկ, ես զիտեմ, որ դու ինձ սիրում ես...

ՄԱՅՐ

Սիրումեմ, պաշտումեմ, որդիս, միայն դու եթէ ունես սէրս, մօր տեղ ես ընդունում ինձ, ու բեմն իմ խօսքս, իմ մի խնդիրս էլ մօր խօսքի տեղ, մօր աղաւանքի տեղ ընդունիր...

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Ասա, մայր դու զիտես, որ ես այժմ երկու բանի աէր եմ՝ մէկը իմ մայրս է, մէկը իմ թշնամիներս, որպէս ետև ինձ բարեկամ չ'ունիմ; Այլ ում պէտք է սիրեմ, եթէ քեզ չ'սիրեմ; (նստեւ լով մօր մօտը) ասա...

ՄԱՅՐ

Ես հաստատը զիտեմ, որ Սառան մի ժամ չեքաշել, կվերադառնայ...

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Ո՞ւղեղ... որտեղից զիտես:

ՄԱՅՐ

Ես նրանց լաւ եմ ձանաշում, կսպանի նրան հայրը, կուղարկի... Այն եմ ասում. եկաւ թէ չէ որդի... հանգիստ ընդունիր...

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Ես կարծում էի աղասուել եմ սատանայի փորձանքիցը, կրկին, երկինք արդարադառ, նրան

ձեռքն ես դյում ինձ! Մայրիկ լաւ վերջը, վերջը ի՞նչ պէտք է անենք. նա եկաւ սկսեց իրան է շը քշել, գարձեալ նոյն բանը... Ոչ, աս մահից վաս է ինձ համար:

ՄԱՅՐ

Մահի անունը մի տուր!, թող, մեր ճակատին զրածն է:

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Մեր ճակատին զրածն է! Մայրիկ եթէ այսօր բուայ պէս քեզ մի որեւիցէ հայհոյանք ուղղի, այն ժամանակը ես իմ տէրս չեմ լինիլ, կ'տամ կը սպանեմ...

ՄԱՅՐ

Որդի, որդի:

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Այսօր ուղեցայ տալ աթոռովը բայց ձեռաքս դողաց... ես կարող եմ համբերել, երբ տեսնեմ նա քեզ մի թթու խօսք ասի... ե՞ս... ե՞ս, որը քեզ հարուստ մօրից աղքատ շնիցի իմ աղպայամութիւնովս, ես այդ բանը մոռանան գամ ամուսնանամ կին բերեմ տուն, որ համարձակուի նա մօրս... ոչ անիծեալ լինի այն ժամը, որ այդպիսի բան պատահի... ես ինձ կ'սպանեմ...

Որդի... թէ ինձ սիրում ես, լուիր... այդպիսի խօսքերը իմ ականջիս համար շատ ծանր են, թող...

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Մայրիկ ես հաստատը դիմեմ, որ վերջը լաւ բան չ'պէտք է զուրս զայր ես քեզ այնքան եմ սիրում որ քո հրամայած բանը եթէ լինի իմ զլուխս կտրիլը, կ'անեմ բայց... այս բանը, նրա, այն առիւծացած չնշն որթի վերադառնալը, կըրկնում եմ, այն տեղը կ'հասցնի բանը, որ ես ստիպուած կ'լինեմ կամ զլուխս սպանել, կամ փախչել... բայց ես քեզանից հեռացողը չեմ... ինքդ իմացիր, մայրիկ, որ ուրիշ բան է, դուրս գալիս վերջը:

ՄԱՅՐ

Եթէ ինձ խելօք ես անուանումի ինչո՞ւ չես ուզում լսել, ինչո՞ւ չես ուզում հաւատալ...

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Լաւ, թող զայր բայց...

ՄԱՅՐ

Մօրդ սպանիր, յետոյ ասա բայց...

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Օ՛Հ մայրիկ... (գրկելով) մայրիկ, թող ծըն-
կանդ վրա գլուխս դնեմ... քիչ հանգստանամ...
ՄԱՅՐ (համբուրելով)

Հանգստայիր... (ցածր) Աստուած ողորմած,
ողորմած Աստուած... խղճա մեզ... իմ գառն որ-
զու վրա պահիր ձեռքդ... պահիր մինչև վերջը:

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Փոքրիկ ժամանակս չար երեխայ էի...

ՄԱՅՐ

Քո լուսահողի հայրդ քեզ դառնուկ էր կո-
չումի իսկ ես անուն չեի զտանումի որ քեզ ա-
նուաննեմ... այնքան բարի երեխայ էիր (ցածր) Տէր
ողորմած լսիր մեզ, եթէ չ'հաւանես, այն ժամա-
նակը... (Նայելով որդու երեսին) քնի՛ր, քնի՛ր:

ՍԱՀԱԿԵԱՆՑ

Դու էլ քնիր... ես ուզումեմ որ միասին քը-
նենք, որ այս իմ քնած ժամանակը դու հազար ու-
մի մտածմունքի մէջ չ'մոնես: (Աչքերը խփում է):

ՄԱՅՐ

Լաւ, լաւ: (աչքերը խփում է, գլուխը կա-
խանում):

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ

Ա

Բէմը՝ Զայեանցի տունն է:

(Դաստիարակութեան աշխատանք) ԶԱՅԵԱՆՑ (մենակ)

Միշտ առիսպուած եմ փախչիլ, գողի պէս գալ
տուն խանութիցս, որ մարդի երես չ'տեսնեմ եկե-
ղեցի չեմ գնումի այդ պատճառաւ: Եւ կարող եմ:
եթէ ուզենամ մարդամէջի գլուխս բարձրացնել,
քիչ բարձր պահել... արել եմ, համն էլ առել.
քիչ է մնում կանգնած տեղս պատառուի, ինձ մէջը
տանի: Խրանք, իրանք, այդ չ'կամ, նախանձոտ,
շարի ծնունդները իմ աշքիս առաջին են վրաս
քթածիծաղ տալիս... անպատճեռթիւն, սոսկալի
անպատճեռթիւն... Ա՞նչ կլնի սրա վերջը: Պա-
տիւս ընկած պէտք է մնայ. ինձ բարիլոյս տալուց
պէտք է փախչին այն մարդիկը, որոնց իմ եղուն-
գի հետը չեմ փոխիլ... մինչև երբ... Ա'վ արդա-
րադատ Աստուած, Դու նրանց զլիին մի քար գցիր,
որդու շուտով մարդ չինիր, այնպէս մարդ, որ...—
Եկեղեցի չեմ գնում... բայց տանը... պաշներովս
յատակը ամեն օր կլուանամ... Աստուած! թող

այն ժամանակը խօսան... Այ անիրաւներ, ինչո է ծովել, որ իրար դլսով էք եղել, ինձ մարդի տեղ չէք դնում: Սպասեցէք: Այն ժամանակը ե'ս մէկ կլինիմ: ամբողջ քաղաքը թող մէկ լինի, անսնենք ով ում վրա ուշադրութիւն կ'զարձնի—ե՞ս, թէ դուք: Այս, Ասուուած (գլուխը թէքում է սեղանի վրա):

(Մանում է) ՄԱՐԻԱՄ (ցածր)

Այս էլ կեանք ե՞նք քաշում: այս էլ ապրում է: Մի տեղից տարարադրութիւնը, միւս կողմից սրա բնաւորութիւնը, գլուխը թէքել է, — մտնում եմ չ'ասել, ես մտայ թէ մէկ կատու. տարին տամներկու ամիս մտքի տան մէջ կորած, կ'ասես մեծ պատ լինի այստեղ սրա տեղը նստած: Մեր տունը մնանդը կ'ասի մեռելատուն է: Մի անգամ կհամարձակվիմ հարցնել, թէ ինչու վրա ես մտածում, այ աղայ: Ես էլ եմ մնացել տարակուսուած: Փառք Աստուծոյ, աղջկայ բաժինք տալով կամ մի 15 հազար մանեթով, քսակին զօռ չէ հասել, որ... (բարձր) Սիմօն:

ԶԱՅԵԱՆՑ

ՀԸ ՀԸ:

ՄԱՐԻԱՄ

Սիմօն, ուղարկեցի Սառայի յետելիցը:

ԶԱՅԵԱՆՑ

Ի՞նչ անեմ, ուղարկեցիր:

ՄԱՐԻԱՄ

Սամանիցը այսօր նամակ չ'կա՞յ:

ԶԱՅԵԱՆՑ

ՈՒ

ՄԱՐԻԱՄ

Տարին վերջանում է... ախար չ'պէտք է իւ մանանք թէ ինչ է...

ԶԱՅԵԱՆՑ

Ի՞նչ պէտք է լինի... ի՞նչ պէտք է, որ լինի:

ՄԱՐԻԱՄ

Այսպէս.—տեսնենք՝ փոխել են թէ չեն փոխել:

ԶԱՅԵԱՆՑ

Սա. բերանդ չորանայ այ անսաստուած, ուշ զումես ինձ ողջ-առօղջ տեղովս մորթես... չե փոխել... այ քո լեզուդու...

ՄԱՐԻԱՄ

Ա՛հհհ, այ մարդ! ես իմ որդու.

ԶԱՅԵԱՆՑ (բերանը ծռմուկով):

Ես... իմ որդու...—տեսնես Աստուածը ինչի համար է կանանց ստեղծել.—մենք էլ ենք ծնողներ, գուք էլ, գուք... գուք հաւի պէս երկուս ունիք... ձեզ համար որդին... զուք ի՞նչէք, որ որդին ձեզ համար ինչ արժողութիւն ունենայ... Վաղը, Աստուած մի արացէ, մի... շատ փոքր բան կայ որդուս, քեզ ի՞նչ, քո լաշաքիդ ի՞նչ, բայց իմ դտակս է դեսինը մօնելու: Ո՞վ ողջ, ո՞վ մեռած—ինձ համար այս տարի զասատնիցը փոխուիլը զիտե՞ս ինչ զին ունի, զիտե՞ս... Դու որտեղց զիտես! Ես զիշերցերեկ, հենց այս ըսպէիս էլ, ազօթ ևմ անում որդուս համար, որովհետեւ, Աստուած մի արացէ, մի բան պատահած ժամանակը, ես իմ տէրը չեմ լինիլ... ինձ համար այն ժամը—մահ է:

ՄԱՐԻԱՄ

Ան, Սիմօն, որ այլպէս խօսում ես:

ՍՍ.ՌԱ. (մտնում է):

Բարե ձեզ...

Ա. չ Աղջիկ...
Զ. չ Աղջիկ...

ՍՍ.ՌԱ. (արագ):

Այ հայր, այ մայր! Ես պարտական եմ ա-

մեն սատանայի հետը վարւողութիւն անել, ես պարտական եմ ամեն մի Աստուածու արարածի ձեռքի տակին մնալ, խօնարհ ու էշ. որ զլսիս մուրճ բանացնի—ասեմ—շնորհակալութիւն: Ասացէք, կարելի է մի թուրքի կամքը տալիս է ինձ իրան աղախինը շնորհի, պէտք է դառնամ: Ովէ իմ ստեղծողը, միթէ իմ ստեղծողը ինձ տշարհիս երեսն է գցել, խելք զրել զլսումս, որ ես ոչխարի խելքով շարժուիմ: ոչ, Աստուած այլպէս անհեռատես չէ, գուք էք, գուք, ձեզ մեծ համարողներդ, ուրիշներին խորհուրդներ տուողներդ, նրանց ճանապարհ ցոյց տուողներդ... այս, գուք էք մեղաւորը... Եւ այսօր արտասուրքը երեսիս գուռը՝ գուռը եմ ընկել, գուք չէք պատճառը...

ԶԱՅԵԱՆՑ

Ի՞նչէ պատճառը, ինչ ես դատարկ զլսիցդ գուրս տալիս, խօսում ես, ասա..., տեսնենք... այ...

ՄԱՐԻԱՄ

Կոռւել ե՞ս...

ՍՍ.ՌԱ.

Վերյրել էք, ինձ համար ամուսին ճարել: Աստուած նրա զատաստանը անի: Ես շատ խօսաւ չեմ սիրում: Ես ձեզ կ'ասեմ: որ այս խայտառակութիւնը, եթէ գուք կարող էք կրել, ես ոյժ չու-

Նիմ ես թուրքի աղջիկ թող լնեմ... ես ինձ կը
ապանեմ այլ չեմ կոխիլ ոտով նրա դուռը:

ՉԱՅԵԱՆՑ

Ի՞նչ այ անզգամ ի՞նչ:

ՍԱՌԱԾ

Ուսում եմ...

ՉԱՅԵԱՆՑ

Գնամ, գնամ, կորիր երեսիդ ջրովը, կորիր թէ
Սառա աղջիկ, գիտես իմ բնաւորութիւնս. կէս կէս
կանեմ չեմ նայիլ թէ աղջիկս ես, թէ դժոխւ-
քի տակիցն ես եկել... գնամ, ասում եմ դու քա-
նի զիսանի ես, որ ոչ հայր ես հարցնում, ոչ մայր
և ոչ ամուսին...

ՍԱՌԱԾ

Ես ել այն եմ ասում, որ դու ինձ դժոխւ-
քիցը եկած ես համարել, աղջիկ չես համարել!...
— չեմ գնալ, արա, ինչ ուզում ես, մորթիր, կա-
շես քերթիր, չեմ գնալ... կ'զնամ ջուրը ահա
այն հորը կ'ընկնեմ...

ՉԱՅԵԱՆՑ

Ո՛չ Տէր Ողորմած! այսքան լրբութիւն, սպա-
նեմ ինչ անեմ... Արիւնս պղտորելէ, Սառա, լաւ
իմացիր այս խայտառակութիւնը իմ ու քո մա-

Հիցը յետոյ պէտք է լինի... բաւական է, ասում
եմ գնա! Տես (ձեռքը մէկնելով աթոռին):

ՄԱՐԻԱՄ

Սիմօն, զսպիր քեզ, կ'զնայ, առաջնն ան-
գամը չէ: Նոր ես տեսնում սրա անզգամն վթիւնը:
Պէտք է կանչենք վերջապէս փեսային, սկսուրը,
նախատենք... Մենք ել պէտք է քիչ ճշմարիտը
խօսանք, Սառան յիմար չէ, միթէ չ'գիտէ որ այս
կատակ չի, կ'զնայ... սիրով այրուելէ, ծեծելեն,
ով գիտէ:

ՍԱՌԱԾ

Դու ինձ տեղ փաստաբան մի լինիր! քեզ
չեմ խնդրում: Ես այնտեղ գնացողը չեմ: Զեմ չեմ:
ՉԱՅԵԱՆՑ (յարձակուելով)

Թէ՛չ, որ այդպէս է... (Սարիսմը մէջը ընկ-
նելով):

ՄԱՐԻԱՄ

Սիմօն, Սիմօն, Աստծու համար...

ՉԱՅԵԱՆՑ

Թօող, թող, թէ չէ քո դուխող ել կէս կէս
կ'անեմ...

ՄԱՐԻԱՄ

Արա, առաջ իմը արա!

(Սիմօնը յետ է քաշվում):

ՍԱՌԱ

Թաղէք, թող, սպանի ինձ:

ՄԱՐԻԱՄ

Լուիր գոնէ, անզդամ—Այտղայ, խելքի եկ
մտածիր:

ԶԱՅԵԱՆՑ

Ոչ, անիրաւի ծնունդ!... էլ ոյժ չէ մնացել:
ՄԱՐԻԱՄ

Աիմոն, գնա միւս սեհեակը, գնա...

ԶԱՅԵԱՆՑ (Կատումէ սեղանի մօտ) Գլուխը
դնում սեղանի վրա և լալիս:

ՄԱՐԻԱՄ

Սառա, գու՝ գնալը՝ պէտք է գնաս: Գու՝ զիւ-
տես: Լաւ կլնի, որ հօրդ օրը չ'սեացնես, մօրդ
քթի ծուխը վեր չ'անես, Սառա:

ՍԱՌԱ

Ի զուր տեղն ես խօսում: Եւ . . .

ՄԱՐԻԱՄ

Այտ աղջիկ, տես քո հայրդ այն տեղն է հա-
սել, որ պատրաստ է արիւն զցել, քեզ, աղջիկ
ասում եմ մի հարցրու դեռ ժամանակ կայ, ասա...

Ես զիտեմ որ գնալու ես. Եթէ սատանաներով
լցրած լինի քո ամուսնու տունը, դարձեալ..:

ՍԱՌԱ

Ես ամուսին չեմ ճանաչում: Ես կ'զնամ՝ կը
խեղդուեմ!

ՄԱՐԻԱՄ

Մի մտիկ արա քո հօրդ, ձայն է մնացել
փորումը, որ խօսայ: Խղճա մեզ: Տղամարդ տեղովը
գետինն ես կոխել, արեներս խաւարեցրել:

ՍԱՌԱ

Ես չեմ մեղաւորը... Ես ի՞նչ անեմ:

ՄԱՐԻԱՄ

Սառա, Եթէ քո հօր սէրը չ'ունիս, քո մօրը
համար չես կատարիլ մեր ասածը, գոնէ քեզ վրա
մտածիր... Հաւատա, Սառա, որ քեզ տանիցը
դուրս կ'անի քո հայրդ, Եթէ...

ՍԱՌԱ

«Եթէ»-ի բան չկայ, ես չեմ... չեմ գնալու.
ահա այս ես, այն էլ նա... ինձ սպանի, մորթի,
ինչ ուզում է անի.—զուք, որ ինձ օգնելու տեղ,
իմ ցաւերս դարմանելու տեղ, ուզում էք ինձ
հում ուտել, ուրեմն դուք էլ իմ ծնողներս չք,
ես կ'զնամ՝ կ'զնամ.. այդ ես զիտեմ: ուր: Ահա,

Հայր, եթէ կամենում ես, ինձ սպանիր! սպանիր,
եթէ ձեռքը թոյլ կ'տայ չե դողալ:

ՍԻՄՈՆԸ վեր է կենում ծունկ չոքում Սառայի առջել:

Սառա, աղազում եմ քո սարի պէս հայրդ
քո առաջեղ առաջին անգամը իւր կեանքում ձընչ
կազք աղազում է... զնա... կրիր, ինչ զնում են
շինքիդ, միայն հօրդ անսարատ պատիւը, առանց
այն շշափուած, ցեխին մի արա հաւասար! հայր
սական տունդ մի քանդիր! Սառա... երդվում եմ
Ասսուծու և Քրիստոսի միութիւնովը, որ ամեն
բան կ'անես, եթէ ընդդիմոնաս, եթէ չ'գնաս հէնց
այս րոպէիս: Ես զարհուրում եմ ասել, Սամոնի
արել վկայ, որ սրտիս մեջ, ինչպէս մի ծովի մեջ
կայ և անդին քար և գարշելի կենդանիներ: Ու
րեմն, աղջիկս, խօսա... թող խօսքերս դործով
չ'մեկնեմ:

ՄԱՐԻԱՄ

Աղորմած Աստուած... կակոել!...

ՍԱՌԱ

Հայր, ինդրում եմ վեր կաց... ես կ'զնամ:...
ԶԱՅԵԱՆՑԸ վերկենալով համբուրում է աղջկանը:

ՍԱՌԱ

Երեսս կ'սեացնեմ: կ'զնամ: իմ թքածս կ'լիւ
վեմ քո պատճառաւ, քո խնդրանօք, հայր...

ԶԱՅԵԱՆՑ

Հողիս...

ՄԱՐԻԱՄ

Բայց, ես կ'ամենայի, որ նա իր քաւթառ
մօրը մի տեղ թողնէր, դուրս աներ մի խօսքով
իմ տնիցս... այն ժամանակը, հաւատացելք, իմ
ամուսնու կապը պինդ կ'պահիմ ձեռքիս և...

ՄԱՐԻԱՄ

Այդ նա կ'անի, ի՞նչ ես երեխայի պէս խօս
սում:

ԶԱՅԵԱՆՑ

Ուղեղէ: Նա չե անիլ... Բայց, դու, Մարիամն
դնա, Սառայի հետը միասին զնա, քո իմացածի
պէս նրանց մի լաւ խայրառակիր, ասա ամեն բան
ինչ կարող ես միայն թէ սկեսուրը վանդելու մա-
սին ոչինչ խօսք...

ՄԱՐԻԱՄ

Ես չեմ գիտում մի՞թէ:

ԶԱՅԵԱՆՑ

Մենք մեր ձեռքովս մեղ յարգանքից, պա-
տուից կ'զցինք, եթէ այդպէս յիմարութիւն պա-
տահի, — սկերուրը դուրս անել տանիցը, այդ է
պակաս!

ՄԱՐԻԱՄ

Սառա, դու կարծումես որ տանը մէջ գլուխը հանգստանայ, դուրսն էլ միենոյն կլինի։ Ոչ որդի, նրա անէծքը... Դու չ'պէտք է նրան որդուցը բաժանես, նրան անէծքը երկինք կ'ծակի։

ՍԱՌԱ

Մայրիկ, լաւ, գնանք միամին... գնանք, բայց բոլոր ժամանակը դու պէտք է խօսաս, — ես չեմ կարողանում երեւակայել մինչև անդամ թէ երեսիս անունը շան կաշի ե՞մ դնումի թէ ի՞նչ, որ յետ եմ գնում։ Ես ուրիշ բան էի վճռել, բայց... Հայրիկ, քեզ խղճացի... դու էլ ինձ խղճա... տես, որ ես այրուած սիրա ունիմ...»

ՄԱՐԻԱՄ

Գնանք, սիրելիս։

ՍԱՌԱ

Մնաք բարե։

ԶԱՅԵԱՆՅ Ս. ՃԵԿԻԳՐ ԲՈՆԵԼՈՎ,

Յուսով եմ որդիս, որ միւս անդամ քո մէր տունը եկած ժամանակը ինքս իմ՝ մէջս կարծեմ թէ ժաղաւորի կին ես։ Թող, որդիս, արտասուքը քեզ լիեզրի, միայն թէ պատիւդ անարատ մնայ, յարգանքդ աւելանայ, որովհետեւ և անպատճու-

թիւնը և խայտառակութիւնը աւելի, քան կարծումես, սոսկալի բաներ են... Մի մնուանար... Օգնի՛ր ինձ, օգնեցէ՛ր միասին բոլորեքեանքդ վերականգնեմք շոշափուած պատիւս... Գնա։ Ես էլ գնամ խանութս... Չ'մոռանաս, Մարիամ.., գնացէք . . .

(Ամենքը դուրս են գնում։)

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՅԾՈՂՈՒԹԻՒՆ

Բէմը՝ Սիմօն Զայեանցի տունն է, Սիմօնը նստած է.
Մարիամը մտնում է:

ՄԱՐԻԱՄ

Սիմօն, միթէ այդպէս կարելի է. քանի օր է,
3 օրից աւելի է, քո բերանդ հացի կտոր չէ տես-
սել. ինչ որ այն ոռը կորած, Աստուծու տարած
քո եղօր մեծ որդին լուր բերեց, թէ իրան եղա-
բայրը փոխելէ դասատունը, ճիշտ այն օրից...
չայ էլ չես խմել:

ԶԱՅԵԱՆՑ

Ապա, ի՞նչ հաց կուլ կերթայ կոկորդովս
երբ իմ աչքիս առաջին տեսնում եմ եզրունզս
չարժող եղայրս որդով բազգաւորվում է, իսկ
ես աղջկանովս արդէն անբաղացել եմ... Մէկ էլ
այն, երբ երեակայում եմ ինձ թէ ինչ կ'ինի օրս...
այսինքն... շատ անհամբեր սպասում եմ...

ՄԱՐԻԱՄ

Կամակ... Այս մի շուտ նամակ լինի... հան-
գըտանանք:

ԶԱՅԵԱՆՑ

Բաւական է այս կնօջը հետ երկու խօսք

խօսաս, որ սկսի լեզուին զօռ տալ: Աղջեկ ինչու-
ես առանց մասձելու լեզուդ գործ ածում: Տես
ինչ ես խօսում: Ասում ես հանգստանանք: Այդ
ասելով ինչ ես ուզում հասկացած լինիս, որ
մենք, մի գուցէ, նամակը ստանալուց կարող ենք
և անհանգստանալ... «Մեղայ Աստուծոյ» ասա՛ ես...

ՄԱՐԻԱՄ

Մեղայ ԳԵՂ, Արարիչ ԻՄ Եթէ մեզաւոր եմ...
ԶԱՅԵԱՆՑ

Ես ամենն ին չեմ անհանգստանում այդ կող-
մից, որովհետեւ ի՞նչ կայ:

ՄԱՐԻԱՄ

Դու ինձ ես ասում այդպէս չէ: Լաւ: Իսկ
ինքդ ինձանից վասթարն ես ասում: Դու չ'ասա-
ցիր թէ մասամբ ես այն պատճառով չեմ ուսում
հաց, որ Ասմանի...

ԶԱՅԵԱՆՑ

Աս... ես կ'համարձակուեմ այդքան տեղը յի-
մարութեան տալ զննքս: Կասկածե՛լ... Ես ասում
եմ թէ զբա... այսինքն իմ ախորժակը կապուե-
լու պատճառը այն վուչ եղբօրս...

ՄԱՐԻԱՄ

Լաւ... ասենք թէ այդպէս է:

ԶԱՅԵԱՆՑ

Ապա ուրիշ ի՞նչէ կարող լինել:
ՄԱՐԻԱՄ

Դէհ դու ինձ այժմ սովորեցրու ինչպէս առ
սեմ յայտնեմ քեզ իմ սրտիս տուածը այսինքն,
նամակի մասին ինչպէս խօսամ որ...

ԶԱՅԵԱՆՑ

Յիմար պատաւ, եթէ խօսալո չ'գիտես, ու
բեմն այսուհետեւ էլ մի իմացիր...—իսկ ես կա-
տակ չեմ անում! Իմ կարծիքով ... այսինքն ին-
ձանից լինի կախուած այսօր սատնամնամակ, վա-
զը, թէ մի ամսից յետոյ—մէկ է ես չէի ուզենալ
զօր. որ այս ժամիս ինձ Սամանիցը նամակ բե-
րէիր:

ՄԱՐԻԱՄ

Լաւ... հիմա եթէ կարելի է, ասա... ի՞նչ
պատճառաւ չէիր ուզենալ, որ այս ժամիս գար
նամակ... տես որ ինքդ էլ...

ԶԱՅԵԱՆՑ

Լոիր: Սո... լեզուդ յետ քաշեր: Այդպէս չէ:
ՄԱՐԻԱՄ (մտնելով)

Անիծուի իմ ծնած ժամն էլ, օրն էլ: Հի-
մա ասացէք, դէհ ասացէք, հիմա էլ համոզե-

ցէք ինձ զնալ իմ դրող ամուսնու ստիպեցէք,
այ խելօք, անուններիդ մ.ձեւ դրաձներ!

ԶԱՅԵԱՆՑ

Վայ վայ վայ... կրկին...

ՄԱՐԻԱՄ

Չեր զլուխը վայ տուեցէք, իսկ ես զնում եմ
գնումեմ այս բոպէիս խեղդուելու:

ՄԱՐԻԱՄ

Մառա

ԶԱՅԵԱՆՑ (մօտենում է)

Աղջիկ! խօսա,—խօսա տեսնեմ, այ անզգամ
շուտ!

ՄԱՐԻԱՄ

Իմ մահիցը յետոյ լսեցէք ումնից կ'կամե-
նաք:

ԶԱՅԵԱՆՑ (Կոկորդիցը բռնելով)

Խօսա, եթէ ոչ...

ՄԱՐԻԱՄ

Աստուած! վայ!

ՄԱՐԻԱՄ

Մեռայ, թող: (Զեռքիցը ազատուելով): Ու-
զումէք—սպանեցէք, բայց...

ՄԱՐԻԱՄ

Աստուած, Սիմօնի արարմնւնքը իրան առաջն
ևս հանել!

ԶԱՅԵԱՆՑ

Ասռա, դու կարծում ես կրկին պէտք է չու-
քեմ խնդրեմ! Այ անամօթ, այ՞ս: Ասս ասում եմ:
փախելե՞ս, ինչո՞ւ:

ՄԱՐԻԱՄ

Ասռա (ընկնելով՝ Սառայի շլիքով) Խօսա,
տես չարացած է!

ՍԱՌԱ

Դու հայր իմ (Մար.) Թող, տեսնեմ—ինձ
ծնելես, որ քո բնաւորութեան սկսութիւնը քո
մէ մաղձը ինձ վրա թափե՞ս: Այ՞ս... ինձ քո ա-
նէծքի առարկան շնես իմացիր, որ Աստուած է
բերում քո արարմնւնքդ քո առաջդ, ինձ այսոեղ
հասցնելով: Ինձ ի՞նչ: Թէկուզ ամուսինս մեռած
լինի...

ԶԱՅԵԱՆՑ

ՄԻԿԱԵԼ:

ՍԱՌԱ

Միթէ դու այդպիսի արդար հոգի ունիս,
որ Աստուած քեզ այդքան խնայի: Ոչ...

ԶԱՅԵԱՆՑ

Ասռա, հոգիս մարմնիցս բաժանեցիր, բաւա-
կան է: Ասա...

ՍԱՌԱ (նստելով)

Ես իմ աեղս հանգիստ վեր կ'ընինեմ) ինձ
համար ամեն բան մէկ է դարձել, ինչ ուղղում էք,
արէք: Ես միայն ձեղ կ'ասեմ այն, որ ձեր ընտրած
մինչեւ երկինքը բարձրացրած փեսան, իմ... այսինքն
ձեր Սահակեանցը պատիւ է արել փախչելու...

Զ.
Մ. } Φախել է:

ԶԱՅԵԱՆՑ

Սուտ ես ասում, անիրաւի աղջեկի: Ո՞վ: Նա
փախելէ (Սառային մօտենալով) ո՞ւր: Շուտ, եթէ
ոչ քո անպէտք հոգին կ'հանեմ, անառակ...

ՍԱՌԱ

Հրամայեցէք, կարգացէք: Ինձ վրա է դրում:
(Գրգանիցը հանում է նամակ)

ԶԱՅԵԱՆՑ

Սուտ է! քո միջեցն է հնարած...

ՍԱՌԱ (Կարդում է)

«Չզուելի արձան: Ես մօրս այնքան էի սիրում
որ կարծում էի թէ միայն սպանան է կարող

մեզ միմեանցից բաժանել... յատուկ այնպէս էլ
եղաւ: Ես գնացի: Խնդրեմ ինձ չ'վնտուէք:

Այս էլ նրա ձեռքը. «Սահակեանց» դէհ!
այժմ հանդատացէք!

ԶԱՅԵԱՆՑ

Անժք: Անիծուէք դուք: Ուր է. մի շուն լիւ
նէր քեզ տեղ այտեղ հաշելիս, կատու լինէր, մուկը
շինէր, իմ աղջկաս ձայնը չ'լսէի: Վայ, վայ, Սի-
մօն տղայ... որտեղ հասաւ բանը ինչ ցեխ է
գցում միանդամայն Աստուած ինձ: Դուք... դէհ
դուրս կորէք, դուրս աչքիցս,—ձեզ ախոռում կա-
պել, էշերին երանի ասել...

ՄԱՐԻԱՄ

Գնանք:

ՍՍ.Ո.Ա.

Փո գլուխդ առաջ վայ տուր! (Դուրս է գնում
Մարիամի հետը:)

ԶԱՅԵԱՆՑ

Անունս, պատիւս, յարգանքս, ծագումն
ցեղս, ես ինքս—բոլոր սատանայի բաժին դար-
ձաւ, Նալբանդ Գասպարի շարքն ընկայ: Այլ այ-
սուհետեւ ապրելը ի՞նչեմ անում: Աշխարհիս լեզու-
ների տակիցը կարող եմ ազատուիլ: Եթէ հարս-
տութիւնս մնխեմ, սրանց բերանը ծեփել կարող

եմ: Ի՞նչ բան ինձ կ'վերադարձնի իմ անարատ
աղաս անունս: Աղա... (վայրածիծաղ) սա երազ
չէ: Աչքերդ լաւ բացիր, թշուառ կենդանի, տես
ինչ խայտառակութեան ես հանդիպել, իսկ դու
էն էիր վնտոռում ինչ էիր քեզ կարծում! . . .
Գնամ ասեմ շուտով խանութս փակեն, ծախու-
տեն ինչ կայ, ինչ չ'կայ... ես այլ ես տանից դուրս
եկողը չեմ 10 հատ քոփակ շներ կ'կապեմ գուանս,
որ մտնողին տեղնուտեղն թողին: Յաւիտեան պէտք
է տանը նստեմ: ուրեմն, անպատճառ, ապառիխներս
ասեմ թող ժողովի, հենց այսօր... Վաղը կ'սկսեմ
մարդկանց երես այլ ես չ'տեսնել, ոչոքի չ'հրաւի-
րել, ոչ դուրս գալ, ոչ խօսալ, ոչ հաց... այս,
եթէ որդիս, իմ միակ յոյս չ'մնար, ես ինձ կ'սպա-
նէի, սովամահ կ'անէի զինքս: Բայց... Աստուած,
(չոքելով) Ազորմած Տէր, Արարիչ մեր, երեսդ մի
դարձրու որդուցս,—ես եկեղեցի չեմ գնացել,
դուցի, ուզում ես ինձ պատժել... բաւական է,
Տէր, այս մէկը, որդուս միայն մի մոռանար: Մինչեւ
որդուս մարդ դառնալը գալը ես տանս կ'աղօթեմ
իսկ նրա գալուցը յետոյ եկեղեցի էլ կ'շնեմ: Երդ
վում եմ Քո զօրութիւնովդ, Աստուած քո առա-
ջեղ...

ՄԱՐԻԱՄ (Մտնելով)

Աղօթում է... Սիմօն, Սամոնիցը նամակ...

ԶԱՅԵԱՆՑ

Աւամակ... տուր!

ՍԱՌԱ. (դռանը երեսում է)

ԶԱՅԵԱՆՑ

Աւամանիցը — (ուղումէ բաց անել) ... Ոչ,
չեմ կարողանում... (սպասում է) բանամի:

ՄԱՐԻԱՄ

Այ տղա, շուտ մի բաց արա...

ԶԱՅԵԱՆՑ

Ասս... կորէք մարդու ձայն չլսեմ! Այն...
Սառա!

ՍԱՌԱ. (մանելով)

Ի՞նչ ես ուղում:

ԶԱՅԵԱՆՑ

Առ, միայն մարդափարի կարդա! (տալով Սա-
ռայի ձեռքը)

ՄԱՐԻԱՄ

Ինքը չէ վստահանում կարդալ, զեռ խօ-
սում է...

ԶԱՅԵԱՆՑ

Շուտ...

ՍԱՌԱ.

Ահա...

ԶԱՅԵԱՆՑ

Ո՞վէ դրողը...

ՍԱՌԱ.

Դրողը... իմ հօրեղը այրը զազար զայեանց.
այնպէս է:

ԶԱՅԵԱՆՑ

Լաւ... սկսիր... Շուտ:

ՍԱՌԱ.

«Աիրելի եղայր, իմ որդի և մոնիր փոխելէ
դասասունը իսկ ինչ կ'վերաբերի ձեր Սամանին
ահա ինչ եմ կարող ձեզ ասել ես այսօր գնացի
զիմնազիան»

ԶԱՅԵԱՆՑ

Վայ.

ՍԱՌԱ.

«Մի թուղթ տուին ինձ, որը և կ'իննը եմ
ձեզ կարդալ:» Ահա, «Աշակերտ Ս. զայեանցը շատ
լաւ էր սովորում:»

ԶԱՅԵԱՆՑ (ծիծազելով)

Լաւ! Աստուած!

ՍԱՌԱ.

«Ամբողջ տարին, բայց...

ԶԱՅԵԱՆՑ

Մահ!

ՍԱՌԱ

Սպասիր, «բայց որովհետեւ բոլոր ուսուցիչների միաձայն խոստովանքները և նրա նախանձոտ, նենդ և ոսոխ բնաւորութեան մասին յայտնած կարծիքները և բացի այդ իր դասատան աշակերտների 5 անգամ տարուայ մէջ, զանգատները մենք առինք աչքի առաջ, այդ պատճառաւ, մենք ուսումնարանի վարչութիւնը, կամենալով ազատ պահել այդպիսի սաներից ուսումնարանը՝ վոնդում ենք Ս. Զայեանցին: (Թուղթը դնում է գրանը):

ԶԱՅԵԱՆՑ

Կրակ, Սամսօն! տուեք ինձ իմ Սամսօնս, վոնդելեն... և կորայ—քրիստոնեայ աշխարհ, և կորայ... զէհ բաւական է, բաւական է լսել... Այ կին, աղջեկ, իմ Սամսօն, այժմ գնացէք, դժոխքի բաժին գարձէք, սատանաների թագաւորները թողձեր զիտումը բուն գնին... իսկ, և, ինձ... Ահա իմ գօտիս... Այժմ ազատ եմ զործելու, դուրս, դուրս ելք, կայծակ կթափեմ զլիներիդ! ձեր պատճառաւ, սատանայի ցեղ, և կորչում եմ...

ՍԱՐԻԱՄ

Ես չեմ գնալ... ի՞նչ ևս անում անաստուած!*

ԶԱՅԵԱՆՑ

Կորէք, (դէպի դուռը մղելով), արիւն կը գցեմ...

Ա. } Օզնութիւն, ծառաներ... հարևաններ...
Ա. } (վազում են դուրս):

ԶԱՅԵԱՆՑ (դուռը կողակելով)

Այժմ... Աստուած, տար ինձ, ևս գալիս եմ համարձակ քո մօտք, ուր կ'կամենաս ուղարկիր... Ստեղծող! կարծում ես... ևս կ'ազօթեմ; այս... Ես ուրախ եմ որ Գու, վերջապէս ինչ ուղում ես արա... (գօտին անցկացնելով շլմնքովը՝ մի ծայրը տանում է՝ ոտին վրա փաթաթում) Անունս, պատիւս կորցնելուց յետոյ) (ձգում է) ևս էլ... (վայր ընկնում):

(Ազմուկ դռան յետեր):

Վ. Ե. Բ. Զ.



Նեղինակը յայտնում է իւր խորին շնորհաւ-
կալութիւնը մէջ. պ. պ. բաժանորդներին և
խնդրում է ներողութիւն մի անգամից բոլոր խոս-
տացածը հասցնել չկարողանալու համար:

Աս կշտապի հետզէետէ հրատարակել և
հասցնել բոլորը:



11439

2015

BC